Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
դեկտեմբերի 28-ի N 515-Ա որոշման

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» (ԳԿՀԱՀ)

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ գիտության զարգացմանը նպաստելու նպատակով գիտական դրամաշնորհների տրամադրում ՀՀ գիտնականներին և գիտական խմբերին
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդված)
3.	Բարեգործը	Հայ օգնության ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայաստանի երիտասարդական հիմնադրամ
4.	Ծրագիրը կատարողը	ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներ, ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գործող, ՀՀ կառավարությանն առընթեր և այլ գերատեշչական պատկանելություն ունեցող գիտական և կրթական հիմնարկներ Բնագավառը՝ գիտություն և կրթություն
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 74 048 000 դրամ, այդ թվում՝ դրամաշնորհի գումարը՝ 68 600 000 դրամ, կազմակեպական ծախսերը՝ 5 448 000 դրամ: Մեկ դրամաշնորհի գումարը կազմում է 5 000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Միջոցներն ստացվելու են ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից:

7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ գիտական և կրթական հիմնարկներ, գիտնականներ ընդամենը՝ 28 գիտական խումբ ընդհանուրը՝ 112 գիտնական
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.01.2019 թ. – 30.01.2020 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի կողմից ՀՀ թերթերում տպագրված հայտարարության հիման վրա մրցույթի կազմակերպում: Մրցույթի հայտարարումից հետո մասնակիցներն էլ. Փոստով, անգլերենով գրված իրենց աշխատանքներն ուղարկում են Նյու Յորքում գտնվող դրամաշնորհի անցկացման կազմկոմիտեին (հետազոտական խորհրդին), որը համապատասխան մասնագիտությունների առաջատար գիտնականներին է ներկայացնում առաջադրված աշխատանքները: Համադրելով տարբեր գիտնականների եզրակացությունները գիտական խմբերի աշխատանքների վերաբերյալ՝ հայտարարվում են մրցույթի հաղթողները: Դրամաշնորհի հաղթողները ճանաչվելուց հետո ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղը պայմանագրեր է կնքում նրանց հետ և վերահսկում պայմանների կատարումը: Գիտական ծրագրերի իրականացման ժամանակ ՀՕՖ-ի մոնիթորինգի հանձնաժողովը տեսեկանն 2 անգամ այցեր է կատարում գիտական խմբեր՝ ընթացքին ծանոթանալու նպատակով: Ծրագրի 1-ին փուլ՝ 01.01.2019 թ. – 01.07.2019 թ. Ծրագրի 2-րդ փուլ՝ 01.07.2019 թ. – 30.01.2020 թ. Դրամաշնորհի առաջին կեսը տրվում է 2019 թ. հունվարին, գումարի երկրորդ կեսը՝ առաջին փուլի ավարտին (հուլիս, 2019 թ.): Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 74 048 000 դրամ, որից՝ 68 600 000 դրամ գումարը տրամադրվում է 28 գիտական խմբերին՝ որպես դրամաշնորհ, յուրաքանչյուրին՝ 2 450 000 դրամ, իսկ 5 448 000 դրամ գումարը հանդիսանում է կազմակերպական ծախս, որը ներառում է՝ ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2 100 000, ֆիքսված հեռախոսակապի ծառայություն 48 000, կոմունալ ծախսեր 2 300 000, գրասենյակային պիտույքներ 1 000 000:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու մատուցվող ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2019 թ.-31.12.2019 թ. ընթացքում՝ 1 600 000 դրամի չափով՝ բնական գազի ձեռքբերման համար, պայմանագիր՝ N 015.08.13.1511՝ կնքված 07.07.2013 թ. «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի (Երևանի ԳԳՄ, ՀՀ, քաղ, Երևան, Չարենցի 141ա, ՀՎՀՀ՝ 00046317), պետական գրանցման վկայականի 020 ներդիրով վերանվանվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22,

		ՀՎՀՀ՝ 02517115) միջև: Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2019 թ.-31.12.2019 թ. ընթացքում՝ 700 000 դրամի չափով՝ ջրամատակարման համար, պայմանագիր՝ N 07-0125-22՝ կնքված 04. 05.2017 թ. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (քաղ. Երևան, Արովյան 66ա, ՀՎՀՀ՝ 02655115) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, քաղ. Երևան 0010, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115) միջև: Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2019 թ.-31.12.2019 թ. ընթացքում՝ 48 000 դրամի չափով՝ ֆիքսված հեռախոսակապի ծառայության համար, պայմանագիր՝ N 010957156՝ կնքված 28.11.06 թ. «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի (նախկին անվանումը՝ «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ) (քաղ. Երևան, Ահարոնյան 2, ՀՎՀՀ՝ 02500052) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115) միջև: Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2019 թ.-31.12.2019 թ. ընթացքում՝ 1 000 000 դրամի չափով՝ գրասենյակային պիտույքների ձեռքբերման համար, պայմանագիր՝ կնքված 13.11.18 թ. «ՊԻԿՈ-ՎԻԿՈ» ՍՊԸ-ի (քաղ. Երևան, Կոմիտասի 59, ՀՎՀՀ՝ 00871025) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115) միջև:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է, այդ թվում՝ 5 448 000 դրամ՝ ընդհանուր արժողության 7.4 տոկոսը: Ծրագրի սպասարկումը ներառում է՝ ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2 100 000 դրամ, ֆիքսված հեռախոսակապի ծառայություն 48 000 դրամ, կոմունալ ծախսեր 2 300 000 դրամ, գրասենյակային պիտույքներ 1 000 000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ ԳԱԱ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն և Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողով
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ